# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՆԿՈՆԳԻ ՀԱՏՈՒԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՆ ՈՒ ՇՐՋԱՆՑԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի Կառավարությունը,

ցանկանալով զարգացնել իրենց տնտեսական հարաբերությունները և ընդլայնել հարկային ոլորտում իրենց համագործակցությունը,

մտադրություն ունենալով կնքելու եկամուտների կրկնակի հարկումը բացառելու մասին համաձայնագիր՝ չստեղծելով հարկերից խուսափելու կամ դրանք շրջանցելու միջոցով չհարկման կամ նվազեցված հարկման հնարավորություններ (այդ թվում՝ երրորդ կողմի իրավազորությանը ենթակա ռեզիդենտներին անուղղակի արտոնություն տրամադրելու նպատակով սույն Համաձայնագրով նախատեսված՝ հարկերից ազատվելու համար պայմանագրի առավելություններից օգտվելուն ուղղված կարգավորումների միջոցով),

համաձայնեցին հետևյալի մասին.

## ՀՈԴՎԱԾ 1

## ԱՆՁԻՆՔ, ՈՐՈՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՒՄ Է ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

1. Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող կողմերից մեկի կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց նկատմամբ:

2. Սույն Համաձայնագրի նպատակներով՝ այն սուբյեկտի կողմից կամ այն կարգավորման միջոցով ստացված եկամուտը, որը Պայմանավորվող կողմերից մեկի հարկային իրավունքով դիտարկվում է որպես ֆինանսապես ամբողջովին կամ մասամբ թափանցիկ, համարվում է Պայմանավորվող կողմի ռեզիդենտի եկամուտ, սակայն միայն այնքանով, որքանով այդ եկամուտը այդ Պայմանավորվող կողմի կողմից հարկման նպատակներով ընկալվում է որպես այդ Կողմի ռեզիդենտի եկամուտ:

3. Համաձայնագիրը Պայմանավորվող կողմի կողմից իր ռեզիդենտների հարկման վրա չի ազդում՝ բացառությամբ 9-րդ հոդվածի 2-րդ կետի, 17-րդ հոդվածի 2-րդ կետի և 18-րդ, 19-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ և 25-րդ հոդվածներին համապատասխան տրամադրված արտոնությունների:

## ՀՈԴՎԱԾ 2

## ՀԱՐԿԵՐԸ, ՈՐՈՆՑ ՎՐԱ ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

1. Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող կողմի անունից սահմանված՝ եկամուտներից գանձվող հարկերի նկատմամբ՝ անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամուտներից գանձվող հարկեր են համարվում ընդհանուր եկամտի կամ եկամտի տարրերի նկատմամբ սահմանված բոլոր հարկերը, այդ թվում՝ շարժական կամ անշարժ գույքի օտարումից ստացված եկամուտների նկատմամբ սահմանված հարկերը, ձեռնարկությունների կողմից վճարվող վարձատրությունների կամ աշխատավարձերի ընդհանուր չափի նկատմամբ սահմանված հարկերը, ինչպես նաև գույքի արժեքի հավելաճի նկատմամբ սահմանված հարկերը:

3. Համաձայնագիրը մասնավորապես կիրառվում է գոյություն ունեցող հետևյալ հարկերի նկատմամբ.

ա) Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի դեպքում՝

i) շահութահարկ,

ii) աշխատավարձից պահվող հարկ և

iii) գույքահարկ,

անկախ այն բանից՝ հարկումը կատարվել է սուբյեկտիվ գնահատման հիման վրա, թե այլ կերպով,

(այսուհետ՝ Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի հարկ).

բ) Հայաստանի դեպքում՝

i) շահութահարկ, և

ii) եկամտահարկ

(այսուհետ՝ Հայաստանի հարկ):

4. Համաձայնագիրը կիրառվում է նաև նմանատիպ կամ էապես նման ցանկացած հարկի նկատմամբ, որը կսահմանվի Համաձայնագրի ստորագրման օրվանից հետո՝ ի լրումն գործող հարկերի կամ դրանց փոխարեն: Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները միմյանց պետք է տեղեկացնեն իրենց հարկային օրենսդրությունում կատարված ցանկացած էական փոփոխության մասին:

## ՀՈԴՎԱԾ 3

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

1. Սույն Համաձայնագրի նպատակներով, եթե այլ բան չի բխում համատեքստից՝

ա) i) «Հոնկոնգի հատուկ վարչական շրջան» եզրույթը նշանակում է՝ ցանկացած վայր, որտեղ կիրառվում են Չինաստանի Ժողովրդական

Հանրապետության Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի հարկային օրենքները,

ii) «Հայաստան» եզրույթը նշանակում է՝ Հայաստանի Հանրապետություն,

բ) «ձեռնարկատիրական գործունեություն» եզրույթը ներառում է մասնագիտական ծառայությունների և անկախ բնույթի այլ գործունեության իրականացումը,

գ) «ընկերություն» եզրույթը նշանակում է՝ ցանկացած կորպորատիվ միավորում կամ ցանկացած սուբյեկտ, որը հարկման տեսանկյունից դիտարկվում է որպես կորպորատիվ միավորում,

դ) «իրավասու մարմին» եզրույթը նշանակում է՝

i) Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի դեպքում՝ Պետական եկամուտների ծառայության ղեկավար կամ նրա լիազորված ներկայացուցիչ,

ii) Հայաստանի դեպքում՝ Ֆինանսների նախարարություն և Պետական եկամուտների կոմիտե կամ վերջիններիս կողմից լիազորված ներկայացուցիչներ,

ե) «Պայմանավորվող կողմ» կամ «Կողմ» եզրույթը նշանակում է՝ Հոնկոնգի հատուկ վարչական շրջան կամ Հայաստան՝ կախված նրանից, թե ինչ է բխում համատեքստից,

զ) «ձեռնարկություն» եզրույթը կիրառվում է ցանկացած տեսակի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու դեպքում,

է) «Պայմանավորվող կողմի ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող կողմի ձեռնարկություն» եզրույթները, համապատասխանաբար, նշանակում են՝ Պայմանավորվող կողմի ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող կողմի ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն,

ը) «միջազգային փոխադրում» եզրույթը նշանակում է՝ նավով կամ օդանավով ցանկացած փոխադրում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նավը կամ օդանավը շահագործվում է միայն Պայմանավորվող կողմի տարածքում, և նավը կամ օդանավը շահագործող ձեռնարկությունն այդ Կողմի ձեռնարկություն չի

համարվում,

թ) Հայաստանի մասով «քաղաքացի» եզրույթը նշանակում է՝

i) ազգությամբ հայ կամ Հայաստանի քաղաքացիություն ունեցող ցանկացած անձ,

ii) Հայաստանում գործող օրենքների հիման վրա որպես այդպիսին կարգավիճակ ստացած ցանկացած իրավաբանական անձ, գործընկերություն կամ ասոցիացիա,

ժ) «անձ» եզրույթը ներառում է անհատ, ընկերություն, հավատարմագրային կառավարման ընկերություն, գործընկերություն և անձանց ցանկացած այլ միավորում,

ժա) Պայմանավորվող կողմի «ճանաչված կենսաթոշակային ֆոնդ» եզրույթը նշանակում է՝ այդ Կողմի տարածքում հիմնադրված սուբյեկտ կամ կազմավորում, որն այդ Կողմի հարկային օրենքներով համարվում է առանձին անձ, և՝

i) որը հիմնադրվել և գործում է բացառապես կամ գրեթե բացառապես կենսաթոշակային նպաստներ և լրացուցիչ կամ կողմնակի նպաստներ տնօրինելու կամ տրամադրելու նպատակով, և որը որպես այդպիսին կարգավորվում է տվյալ Կողմի կողմից, կամ

ii) որը հիմնադրվել և գործում է բացառապես կամ գրեթե բացառապես i ենթակետում նշված սուբյեկտների կամ կազմավորումների օգտին միջոցներ ներդնելու նպատակով:

2. Ինչ վերաբերում է ցանկացած պահի Պայմանավորվող կողմի կողմից Համաձայնագրի կիրառմանը, դրանում չսահմանված ցանկացած եզրույթ պետք է ունենա այն նշանակությունը, որն այդ պահին ունի այդ Կողմի օրենքով այն հարկերի առնչությամբ, որոնց նկատմամբ Համաձայնագիրը կիրառվում է, ընդ որում՝ այդ Կողմի կիրառելի հարկային օրենքներով սահմանված ցանկացած նշանակություն գերակայում է այդ Կողմի այլ օրենքներով տվյալ եզրույթին տրված

նշանակության նկատմամբ, եթե այլ բան չի բխում համատեքստից, կամ եթե, 23-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, իրավասու մարմինների միջև չկա համաձայնություն այլ նշանակության վերաբերյալ:

## ՀՈԴՎԱԾ 4

## ՌԵԶԻԴԵՆՏ

1. Սույն Համաձայնագրի նպատակներով «Պայմանավորվող կողմի ռեզիդենտ» եզրույթը նշանակում է՝

ա) Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի դեպքում՝

i) ցանկացած անհատ, որը, սովորաբար բնակվում է Հոնկոնգի հատուկ վարչական շրջանում,

ii) ցանկացած անհատ, որը հաշվետու տարում ավելի քան 180 օր կամ իրար հաջորդող երկու հաշվետու տարիների ընթացքում, որոնցից մեկը համապատասխան հաշվետու տարին է, ավելի քան 300 օր գտնվում է Հոնկոնգի հատուկ վարչական շրջանում,

iii) ընկերություն, որը գրանցված է Հոնկոնգի հատուկ վարչական շրջանում, կամ այն դեպքում, երբ գրանցված է Հոնկոնգի հատուկ վարչական շրջանից դուրս, որպես կանոն, կառավարվում կամ վերահսկվում է Հոնկոնգի հատուկ վարչական շրջանում,

iv) Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի օրենքների հիման վրա ստեղծված կամ Հոնկոնգի հատուկ վարչական շրջանից դուրս ստեղծված, սակայն, որպես կանոն, Հոնկոնգի հատուկ վարչական շրջանում կառավարվող կամ վերահսկվող ցանկացած այլ անձ,

բ) Հայաստանի դեպքում՝ ցանկացած անձ, որն իր մշտական բնակության, բնակության, գրանցման, կառավարման վայրի կամ նման բնույթի որևէ այլ չափանիշով ենթակա է հարկման Հայաստանի օրենքներին համապատասխան:

Այս եզրույթը, սակայն, չի կիրառվում որևէ անձի դեպքում, որը Հայաստանում ենթակա է հարկման միայն հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներից,

գ) Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի դեպքում՝ տվյալ Կողմի Կառավարություն և ցանկացած տեղական իշխանություն, ինչպես նաև տվյալ Կողմի կողմից ճանաչված կենսաթոշակային ֆոնդ:

2. Այն դեպքում, երբ 1-ին կետի դրույթներին համապատասխան՝ անհատը երկու Պայմանավորվող կողմերի ռեզիդենտ է, նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպով.

ա) նա համարվում է միայն այն Կողմի ռեզիդենտ, որտեղ ունի իրեն հասանելի մշտական կացարան. եթե նա երկու Կողմերում ունի իրեն հասանելի մշտական կացարան, համարվում է միայն այն Կողմի ռեզիդենտ, որի հետ իր անձնական և տնտեսական հարաբերություններն ավելի սերտ են (կենսական շահերի կենտրոն),

բ) եթե հնարավոր չէ որոշել, թե ո՛ր Կողմի տարածքում է գտնվում նրա կենսական շահերի կենտրոնը, կամ եթե նա Կողմերից որևէ մեկում չունի իրեն հասանելի մշտական կացարան, կարող է համարվել միայն այն Կողմի ռեզիդենտ, որտեղ սովորաբար բնակվում է,

գ) եթե նա սովորաբար բնակվում է երկու Կողմերում կամ Կողմերից ոչ մեկում սովորաբար չի բնակվում, համարվում է միայն այն Կողմի ռեզիդենտ, որտեղ ունի բնակության իրավունք (Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի դեպքում) կամ որի քաղաքացի է (Հայաստանի դեպքում),

դ) եթե նա Հոնկոնգի հատուկ վարչական շրջանում բնակության իրավունք ունի և նաև Հայաստանի քաղաքացի է, կամ եթե նա չունի բնակության իրավունք Հոնկոնգի հատուկ վարչական շրջանում և Հայաստանի քաղաքացի չէ, Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները հարցը կարգավորում են փոխադարձ համաձայնությամբ:

3. Եթե 1-ին կետի դրույթների հիմքով անհատ չհանդիսացող անձը երկու Պայմանավորվող կողմերի ռեզիդենտ է, ապա Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները պետք է ջանքեր գործադրեն՝ փոխադարձ համաձայնությամբ որոշելու համար այն Պայմանավորվող կողմը, որի ռեզիդենտ պետք է համարվի տվյալ անձը Համաձայնագրի շրջանակներում՝ հաշվի առնելով արդյունավետ կառավարման, գրանցման վայրերը կամ այլ կերպ ստեղծված լինելու և այլ էական գործոնները: Այդպիսի համաձայնության բացակայության դեպքում տվյալ անձը իրավունք չունի Համաձայնագրով նախատեսված՝ հարկերի նվազեցման կամ հարկերից ազատման՝ բացառությամբ այն չափով և ձևով, որը կարող է համաձայնեցված լինել Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինների միջև:

## ՀՈԴՎԱԾ 5

## ՄՇՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

1. Սույն Համաձայնագրի նպատակներով «մշտական հաստատություն» եզրույթը նշանակում է՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար նախատեսված մշտական վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ կատարվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. «Մշտական հաստատություն» եզրույթը մասնավորապես ներառում է հետևյալը.

ա) կառավարման վայրը,

բ) մասնաճյուղը,

գ) գրասենյակը,

դ) գործարանը,

ե) արհեստանոցը և

զ) հանքահորը, նավթի կամ գազի հորատանցքը, քարհանքը կամ բնական պաշարների ուսումնասիրման կամ արդյունահանման ցանկացած այլ վայրը:

3. «Մշտական հաստատություն» եզրույթը նաև ներառում է հետևյալը.

ա) շինարարական հրապարակ, կառուցում, հավաքում կամ տեղակայում նախատեսող նախագիծ կամ դրանց հետ կապված վերահսկողական գործունեություն, սակայն միայն այն դեպքում, երբ այդ հրապարակը, նախագիծը կամ գործունեությունն ինն ամսից ավելի է տևում,

բ) ձեռնարկության կողմից ուղղակիորեն կամ այդ նպատակով ներգրավված աշխատակիցների կամ այլ անձնակազմի միջոցով ծառայությունների, այդ թվում՝ խորհրդատվական ծառայությունների ապահովում, սակայն միայն այն դեպքում, երբ այդ բնույթի գործունեությունը Պայմանավորվող կողմի տարածքում շարունակվում է դիտարկվող հարկման ժամանակահատվածում մեկնարկող կամ ավարտվող ցանկացած տասներկուամսյա ժամանակահատվածում՝ ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամկետով կամ ժամկետներով:

4. Նպատակ ունենալով միայն որոշելու՝

ա) թե արդյո՞ք լրացել է 3-րդ կետի «ա» ենթակետում նշված իննամսյա ժամկետը.

i) եթե Պայմանավորվող կողմի ձեռնարկությունը մյուս Պայմանավորվող կողմի տարածքում գործունեություն է իրականացնում շինարարական հրապարակի կամ կառուցում, հավաքում կամ տեղակայում նախատեսող նախագծի վայրում, կամ եթե վերահսկողական գործունեություն է իրականացնում այդպիսի վայրի նկատմամբ, և այդ գործողություններն իրականացվում են մեկ կամ մեկից ավելի ժամկետներում, որոնք ընդհանուր առմամբ գերազանցում են 30 օրը, սակայն չեն գերազանցում ինն ամիսը, և

ii) դրանց առնչվող գործողությունները (կամ, վերահսկողական

գործունեության դեպքում, դրանց մասով գործողությունները) իրականացվում են առաջինը նշված ձեռնարկության հետ սերտորեն կապված մեկ կամ մեկից ավելի ձեռնարկությունների կողմից միևնույն շինարարական հրապարակում կամ կառուցում, հավաքում կամ տեղակայում նախատեսող նախագծի իրականացման տարածքում, տարբեր ժամկետներում, որոնցից յուրաքանչյուրը գերազանցում է 30 օրը, այդ տարբեր ժամկետները պետք է ավելացվեն այն ժամկետին, որի ընթացքում առաջինը նշված ձեռնարկությունը գործունեություն է իրականացրել տվյալ շինարարական հրապարակի կամ կառուցում, հավաքում կամ տեղակայում նախատեսող նախագծի իրականացման տարածքում.

բ) թե արդյո՞ք լրացել է 3-րդ կետի «բ» ենթակետում նշված 183-օրյա ժամկետը.

Եթե Պայմանավորվող կողմի ձեռնարկությունն այդ ենթակետում նշված գործունեությունն իրականացնում է մյուս Պայմանավորվող կողմի տարածքում, և եթե տարբեր ժամկետներում այդ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում էականորեն միանման գործունեություն է իրականացվել առաջինը նշված ձեռնարկության հետ սերտորեն կապված մեկ կամ մեկից ավելի ձեռնարկությունների կողմից, այդ տարբեր ժամկետներն ավելացվում են այն ընդհանուր ժամկետին, որի ընթացքում նշված ձեռնարկությունն իրականացրել է իր գործունեությունը:

5. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ համարվում է, որ «մշտական հաստատություն» եզրույթը չի ներառում.

ա) շինությունների օգտագործումը՝ բացառապես ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պահեստավորման և ցուցադրման նպատակով,

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը՝ բացառապես պահեստավորման կամ ցուցադրման նպատակով,

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը՝ բացառապես այլ ձեռնարկության կողմից վերամշակման նպատակով,

դ) ձեռնարկության համար ձեռնարկատիրական գործունեության մշտական վայրի պահպանումը՝ բացառապես ապրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով,

ե) ձեռնարկատիրական գործունեության մշտական վայրի պահպանումը՝ բացառապես ձեռնարկության համար այլ բնույթի գործունեություն իրականացնելու նպատակով,

զ) ձեռնարկատիրական գործունեության մշտական վայրի պահպանումը՝ բացառապես «ա»-«ե» ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության համար՝

պայմանով, որ այդպիսի գործունեությունը կամ, «զ» ենթակետի դեպքում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար նախատեսված մշտական վայրում ամբողջական գործունեությունը կկրեն նախապատրաստական կամ օժանդակ բնույթ:

6. 5-րդ կետը կիրառելի չէ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար նախատեսված այն մշտական վայրի նկատմամբ, որն օգտագործվում կամ պահպանվում է ձեռնարկության կողմից, եթե տվյալ ձեռնարկությունը կամ դրա հետ սերտորեն կապված ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում նույն վայրում կամ նույն Պայմանավորվող կողմի մեկ այլ վայրում, և՝

ա) այդ վայրը կամ այլ վայրը համարվում է ձեռնարկության կամ դրա հետ սերտորեն կապված ձեռնարկության մշտական հաստատություն՝ սույն հոդվածի դրույթներին համապատասխան, կամ

բ) նույն վայրում երկու ձեռնարկությունների կամ նույն ձեռնարկության կամ սերտորեն կապված ձեռնարկությունների կողմից երկու վայրերում

իրականացրած գործունեության տեսակների համակցության արդյունքում առաջացած ամբողջական գործունեությունը նախապատրաստական կամ օժանդակ բնույթ չի կրում՝

պայմանով, որ նույն վայրում երկու ձեռնարկությունների կողմից կամ նույն ձեռնարկության կամ սերտորեն կապված ձեռնարկությունների կողմից երկու վայրերում իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակները համարվում են փոխլրացնող գործառույթներ, որոնք համակցված ձեռնարկատիրական գործունեության մաս են կազմում:

7. Անկախ 1-ին և 2-րդ կետերի դրույթներից, սակայն հաշվի առնելով 8-րդ կետի դրույթները, որոնց համաձայն՝ անձը Պայմանավորվող կողմի տարածքում հանդես է գալիս ձեռնարկության անունից և այդպիսով սովորույթի ուժով պայմանագրեր է կնքում կամ սովորույթի ուժով գլխավոր դեր է ստանձնում այն պայմանագրերի կնքման գործընթացում, որոնք սովորաբար կնքվում են առանց ձեռնարկության կողմից կատարվող էական փոփոխությունների, և այդ պայմանագրերը կնքվում են՝

ա) ձեռնարկության անունից, կամ

բ) այդ ձեռնարկությանը պատկանող կամ օգտագործման իրավունքով այդ ձեռնարկությանը պատկանող գույքի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքը փոխանցելու նպատակով, կամ

գ) այդ ձեռնարկության կողմից ծառայությունների մատուցման նպատակով,

համարվում է, որ ձեռնարկությունն այդ Կողմի տարածքում մշտական հաստատություն ունի ցանկացած տեսակի գործունեության մասով, որը տվյալ անձն իրականացնում է ձեռնարկության համար, եթե տվյալ անձի գործունեությունը չի սահմանափակվում գործունեության այն տեսակներով, որոնք նշված են 5-րդ կետում, որոնք ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար նախատեսված մշտական վայրում իրականացվելու

դեպքում (բացի ձեռնարկատիրական գործունեության այն մշտական վայրից, որի նկատմամբ կիրառելի է 6-րդ կետը) ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար նախատեսված այդ մշտական վայրը, այդ կետի դրույթներին համապատասխան, չեն վերածի մշտական հաստատության:

8. 7-րդ կետը կիրառելի չէ, եթե Պայմանավորվող կողմի տարածքում մյուս Պայմանավորվող կողմի ձեռնարկության անունից հանդես եկող անձը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում առաջինը նշված Կողմի տարածքում՝ որպես անկախ մասնակից, և տվյալ ձեռնարկատիրական գործունեության բնականոն ընթացքի ժամանակ հանդես է գալիս ձեռնարկության անունից: Այնուամենայնիվ, եթե անձը բացառապես կամ գրեթե բացառապես հանդես է գալիս մեկ կամ մեկից ավելի ձեռնարկությունների անունից, որոնց հետ սերտորեն կապված է, այդ անձը սույն կետի իմաստով չի կարող որևէ նման ձեռնարկության մասով անկախ մասնակից համարվել:

9. Այն փաստը, որ Պայմանավորվող կողմի ռեզիդենտ ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող կողմի ռեզիդենտ ընկերությանը կամ վերահսկվում է նրա կողմից կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Կողմի տարածքում (մշտական հաստատության միջոցով կամ այլ ձևով), ինքնին այդ ընկերություններից որևէ մեկը չի դարձնում մյուսի մշտական հաստատությունը:

10. Սույն հոդվածի նպատակներով անձը կամ ձեռնարկությունը սերտորեն կապված է ձեռնարկության հետ, եթե, ելնելով բոլոր էական փաստերից և հանգամանքներից, մեկը վերահսկողություն է իրականացնում մյուսի նկատմամբ կամ երկուսն էլ գտնվում են միևնույն անձանց կամ ձեռնարկությունների վերահսկողության ներքո: Ամեն դեպքում անձը կամ ձեռնարկությունն այլ ձեռնարկության հետ սերտորեն կապված է համարվում այն դեպքում, երբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն ձեռնարկություններից մեկին է պատկանում մյուս ձեռնարկության շահութաբաժնի 50 տոկոսից ավելին (կամ, ընկերության դեպքում, ընկերության բաժնեմասերի ընդհանուր ձայնի և արժեքի կամ

ընկերությունում բաժնետիրական կապիտալի 50 տոկոսից ավելին), կամ եթե ուղղակիորեն կամ անուղղակիորեն այլ անձի կամ ձեռնարկությանն է պատկանում անձի կամ ձեռնարկության կամ երկու ձեռնարկությունների շահութաբաժնի 50 տոկոսից ավելին (կամ, ընկերության դեպքում, ընկերության բաժնեմասերի ընդհանուր ձայնի և արժեքի կամ ընկերությունում բաժնետիրական կապիտալի 50 տոկոսից ավելին):

## ՀՈԴՎԱԾ 6

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏԸ

1. Պայմանավորվող կողմի ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում գտնվող անշարժ գույքից ստացված եկամուտը (ներառյալ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից ստացված եկամուտը) կարող է հարկման ենթակա լինել այդ մյուս Կողմի տարածքում:

2. «Անշարժ գույք» եզրույթն ունի այն նշանակությունը, որը դրան տրված է այն Պայմանավորվող կողմի օրենքով, որտեղ գտնվում է դիտարկվող գույքը: Եզրույթն ամեն դեպքում ներառում է անշարժ գույքի օժանդակ գույքը, գյուղատնտեսության և անտառային տնտեսության մեջ օգտագործվող անասուններն ու սարքավորումները, այն իրավունքները, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերող ընդհանուր օրենսդրության դրույթները, անշարժ գույքի օգտագործման իրավունքը (ուզուֆրուկտը) և աշխատանքի կամ աշխատանքի իրավունքի դիմաց փոխհատուցման կարգով վճարվող՝ փոփոխական կամ հաստատուն վճարումների իրավունքները, օգտակար հանածոները, հանքատեղերը, աղբյուրները և այլ բնական պաշարները. նավերը և օդանավերը անշարժ գույք չեն համարվում:

3. 1-ին կետի դրույթները կիրառվում են անշարժ գույքի անմիջական օգտագործումից, վարձակալությունից կամ ցանկացած այլ ձևով օգտագործումից ստացած եկամուտների նկատմամբ:

4. 1-ին և 3-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից ստացած եկամուտների նկատմամբ:

## ՀՈԴՎԱԾ 7

## ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՇԱՀՈՒՅԹԸ

1. Պայմանավորվող կողմի ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միայն այդ Կողմի տարածքում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող կողմի տարածքում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում վերը նշված ձևով, ապա ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս Կողմի տարածքում, բայց միայն այնքանով, որքանով վերագրելի է այդ մշտական հաստատությանը:

2. Հաշվի առնելով 3-րդ կետի դրույթները՝ այն դեպքում, երբ Պայմանավորվող կողմի ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող կողմի տարածքում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրում այդ մշտական հաստատությանն է վերագրվում այն շահույթը, որը նա կարող էր ստանալ, եթե լիներ նույն կամ նմանատիպ պայմաններում նույն գործունեությունը կամ նմանատիպ գործունեություն իրականացնող ինքնուրույն և առանձին ձեռնարկություն և հանդես գար լիովին անկախ այն ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունն է համարվում:

3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս թույլատրվում է նվազեցնել մշտական հաստատության նպատակների համար կատարված ծախսերը, այդ թվում՝ գործադիր և ընդհանուր վարչական ծախսերը, որոնք կատարվում են այն Պայմանավորվող կողմի տարածքում, որտեղ տեղակայված է մշտական հաստատությունը, կամ որևէ այլ վայրում:

4. Այնքանով, որքանով Պայմանավորվող կողմի տարածքում ընդունված է որոշել մշտական հաստատությանը վերագրվող շահույթը՝ ձեռնարկության ամբողջ շահույթի՝ իր տարբեր մասերի միջև համամասնական բաշխման հիման վրա, 2-րդ կետը ոչ մի կերպ չի արգելում այդ Պայմանավորվող կողմին որոշել հարկման ենթակա շահույթը՝ ընդունված համամասնական բաշխման եղանակով. համամասնական բաշխման ընդունված եղանակը պետք է լինի այնպիսին, որ արդյունքը համապատասխանի սույն հոդվածում շարադրված սկզբունքներին:

5. Մշտական հաստատության կողմից ձեռնարկության համար ապրանքների կամ արտադրանքի միայն գնումը հիմք չէ այդ մշտական հաստատությանը որևէ շահույթ վերագրելու համար:

6. Նախորդ կետերի նպատակներով մշտական հաստատությանը վերագրվող շահույթն ամեն տարի որոշվում է նույն եղանակով, քանի դեռ չկա այլ կերպ վարվելու համար հիմնավոր և բավարար պատճառ:

7. Եթե շահույթը ներառում է սույն Համաձայնագրի այլ հոդվածներում առանձին քննարկվող եկամտի տեսակներ, սույն հոդվածի դրույթները չեն ազդում այդ հոդվածների դրույթների վրա:

## ՀՈԴՎԱԾ 8

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՈՎԱՅԻՆ ԵՎ ՕԴԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԸ

1. Պայմանավորվող կողմի ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում նավերի կամ օդանավերի շահագործումից ստացված շահույթը ենթակա է հարկման միայն այդ Կողմի տարածքում:

2. 1-ին կետի դրույթները կիրառվում են նաև միավորումում, համատեղ ձեռնարկությունում կամ օդանավերի շահագործմամբ զբաղվող միջազգային կազմակերպությունում մասնակցությունից ստացած շահույթի նկատմամբ:

## ՀՈԴՎԱԾ 9

## ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Այն դեպքում, երբ՝

ա) Պայմանավորվող կողմի ձեռնարկությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում է մյուս Պայմանավորվող կողմի ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ մասնակցություն ունի նրա կապիտալում, կամ

բ) միևնույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում են Պայմանավորվող կողմի ձեռնարկության և մյուս Պայմանավորվող կողմի ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ մասնակցություն ունեն նրանց կապիտալում,

և յուրաքանչյուր դեպքում, երբ երկու ձեռնարկությունների միջև նրանց առևտրային կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են այն պայմաններից, որոնք կարող էին ստեղծվել անկախ ձեռնարկությունների միջև, ցանկացած շահույթ, որը հաշվեգրված կլիներ այդ ձեռնարկություններից մեկին, բայց այդ պայմաններից ելնելով՝ նման ձևով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և, համապատասխանաբար, ենթարկվել հարկման:

2. Այն դեպքում, երբ Պայմանավորվող կողմն այդ Կողմի ձեռնարկության շահույթում ներառում և, համապատասխանաբար, հարկում է այն շահույթը, որի առնչությամբ մյուս Պայմանավորվող կողմի ձեռնարկությունը ենթարկվել է հարկման այդ մյուս Կողմի տարածքում, և այդ ձևով ներառված շահույթը համարվում է շահույթ, որը պետք է հաշվեգրված լիներ առաջինը նշված Կողմի ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև պայմանները լինեին այնպիսին, ինչպիսին դրանք պետք է լինեն անկախ ձեռնարկությունների միջև, այդ դեպքում այդ մյուս Կողմը կատարում է այդպիսի շահույթից իր գանձած հարկի գումարի համապատասխան ճշգրտում, եթե այդ մյուս Կողմը այդ ճշգրտումն արդարացված է համարում: Այդ ճշգրտումը որոշելիս հաշվի են առնվում սույն Համաձայնագրի մյուս դրույթները, և Պայմանավորվող կողմերի իրավասու

մարմիններն անհրաժեշտության դեպքում խորհրդակցում են միմյանց հետ:

## ՀՈԴՎԱԾ 10

## ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐԸ

1. Պայմանավորվող կողմի ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից մյուս Պայմանավորվող կողմի ռեզիդենտին վճարվող շահաբաժինները կարող են հարկման ենթարկվել այդ մյուս Կողմի տարածքում:

2. Այնուամենայնիվ Պայմանավորվող կողմի ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից վճարվող շահաբաժինները կարող են հարկման ենթարկվել նաև այդ Կողմի տարածքում՝ այդ Կողմի օրենքներին համապատասխան. սակայն եթե շահաբաժինների՝ շահույթ ստացող սեփականատերը մյուս Պայմանավորվող կողմի ռեզիդենտ է, ապա այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի՝

ա) շահաբաժինների համախառն գումարի 0 տոկոսը, եթե շահույթ ստացող սեփականատերը ընկերություն է, որին ուղղակիորեն պատկանում է ընկերության կապիտալի առնվազն 10 տոկոսը, և որը վճարում է շահութաբաժինները 365-օրյա ժամկետում, ներառյալ շահութաբաժինների վճարման օրը (այդ ժամկետը հաշվարկելու նպատակով հաշվի չեն առնվում սեփականության այնպիսի փոփոխությունները, որոնք ուղղակիորեն կարող են ի հայտ գալ այնպիսի կորպորատիվ վերակազմակերպման արդյունքում, ինչպիսիք են այն ընկերության միաձուլումը կամ բաժանման արդյունքում վերակազմավորումը, որին պատկանում են բաժնեմասերը, կամ որը վճարում է շահաբաժինները),

բ) շահաբաժինների համախառն գումարի 5 տոկոսը՝ մյուս բոլոր դեպքերում:

Սույն կետի դրույթները չեն ազդում ընկերության այն շահույթի հարկման վրա, որից վճարվում են շահաբաժինները:

3. Անկախ 2-րդ կետի դրույթներից՝ Պայմանավորվող կողմի տարածքում

առաջացած շահաբաժինները հարկման ենթակա չեն այդ Կողմի տարածքում, եթե դրանք վճարվում են՝

ա) Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի դեպքում՝

i) Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի Կառավարությանը,

ii) Հոնկոնգի արժութային վարչությանը,

iii) Արժույթի հիմնադրամին,

iv) ցանկացած մարմնի, որն ամբողջովին կամ մեծամասամբ պատկանում է Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի Կառավարությանը, որի կապակցությամբ ժամանակ առ ժամանակ կարող է համաձայնություն ձեռք բերվել Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինների միջև,

բ) Հայաստանի դեպքում՝

i) Հայաստանի Կառավարությանը և որևէ տեղական ինքնակառավարման մարմնի,

ii) Հայաստանի կենտրոնական բանկին,

iii) ցանկացած մարմնի, որն ամբողջովին կամ մեծամասամբ պատկանում է Հայաստանի Կառավարությանը կամ որևէ տեղական ինքնակառավարման մարմնի, որի կապակցությամբ ժամանակ առ ժամանակ կարող է համաձայնություն ձեռք բերվել Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինների միջև:

4. Սույն հոդվածի իմաստով «շահաբաժիններ» եզրույթը նշանակում է՝ բաժնեմասերից, բացառապես ֆինանսական իրավունք տվող բաժնեմասերից կամ զուտ ֆինանսական իրավունքներից, հանքարդյունաբերության բաժնեմասերից, հիմնադիրների բաժնեմասերից կամ այլ իրավունքներից ստացած եկամուտ, որը պարտքային պահանջ չէ, շահույթի մաս է կազմում, ինչպես նաև կորպորատիվ այլ իրավունքներից ստացած եկամուտ, որի նկատմամբ կիրառվում են հարկման այն նույն մոտեցումները, որոնք կիրառվում են բաժնեմասերից ստացվող եկամտի դեպքում այն Պայմանավորվող կողմի օրենքների

համաձայն, որի ռեզիդենտ է համարվում բաշխումը կատարող ընկերությունը:

5. 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժիններից շահույթ ստացող սեփականատերը, հանդիսանալով Պայմանավորվող կողմի ռեզիդենտ, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող կողմի տարածքում, որի ռեզիդենտ է շահաբաժիններ վճարող ընկերությունը, և մասնակցությունը, որին համապատասխան՝ վճարվում են շահաբաժինները, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

6. Այն դեպքում, երբ Պայմանավորվող կողմի ռեզիդենտ ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող կողմից, այդ մյուս Կողմը չի կարող հարկման ենթարկել ընկերության կողմից վճարված շահաբաժինները՝ բացառությամբ այն դեպքի, երբ այդ շահաբաժինները վճարվում են այդ մյուս Կողմի ռեզիդենտին, կամ երբ մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, փաստացի կապված է այդ մյուս Կողմի տարածքում գտնվող մշտական հաստատության հետ, ինչպես նաև չի կարող ընկերության չբաշխված շահույթը ենթարկել հարկման ընկերության չբաշխված շահույթից գանձվող հարկով, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթն ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս Կողմի տարածքում առաջացող շահույթից կամ եկամտից:

## ՀՈԴՎԱԾ 11

## ՏՈԿՈՍՆԵՐԸ

1. Պայմանավորվող կողմի տարածքում առաջացող և մյուս Պայմանավորվող կողմի ռեզիդենտին վճարվող տոկոսները կարող են հարկման ենթարկվել այդ մյուս Կողմի տարածքում:

2. Այնուամենայնիվ, Պայմանավորվող կողմի տարածքում առաջացող

տոկոսները կարող են նաև հարկման ենթարկվել այդ Կողմի տարածքում՝ այդ Կողմի օրենքներին համապատասխան. սակայն եթե տոկոսների՝ շահույթ ստացող սեփականատերը մյուս Պայմանավորվող կողմի ռեզիդենտ է, ապա այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 5 տոկոսը:

3. Անկախ 2-րդ կետի դրույթներից՝ Պայմանավորվող կողմի տարածքում առաջացող տոկոսները հարկերից ազատվում են այդ Կողմի տարածքում, եթե դրանք վճարվում են՝

ա) Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի դեպքում՝

i) Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի Կառավարությանը,

ii) Հոնկոնգի արժութային վարչությանը,

iii) Արժույթի հիմնադրամին,

iv) ցանկացած մարմնի, որն ամբողջովին կամ մեծամասամբ պատկանում է Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի Կառավարությանը, որի կապակցությամբ ժամանակ առ ժամանակ կարող է համաձայնություն ձեռք բերվել Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինների միջև,

բ) Հայաստանի դեպքում՝

i) Հայաստանի Կառավարությանը կամ որևէ տեղական ինքնակառավարման մարմնի,

ii) Հայաստանի կենտրոնական բանկին,

iii) ցանկացած մարմնի, որն ամբողջովին կամ մեծամասամբ պատկանում է Հայաստանի Կառավարությանը կամ որևէ տեղական մարմնի, որի կապակցությամբ ժամանակ առ ժամանակ կարող է համաձայնություն ձեռք բերվել Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինների միջև:

4. «Տոկոսներ» եզրույթը սույն հոդվածի իմաստով նշանակում է՝ եկամուտ

ցանկացած տեսակի պարտքային պահանջից՝ անկախ հիփոթեքով ապահովված լինելու հանգամանքից և պարտապանի շահույթում մասնակցության իրավունքի առկայությունից, և, մասնավորապես, եկամուտ պետական արժեթղթերից և եկամուտ պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից, այդ թվում՝ այդ արժեթղթերի, պարտատոմսերի կամ փոխառության տոմսերի հետ կապված պարգևավճարներից ու մրցանակներից: Սույն հոդվածին համապատասխան՝ ժամկետանց վճարման համար գանձվող տույժերը տոկոսներ չեն համարվում: «Տոկոսներ» եզրույթը չի ներառում եկամտի որևէ տեսակ, որը, սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթներին համապատասխան, համարվում է շահաբաժին:

5. 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսներից շահույթ ստացող սեփականատերը, հանդիսանալով Պայմանավորվող կողմի ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող կողմի տարածքում, որտեղ տոկոսները հաշվարկվում են այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և պարտքային պահանջը, որի մասով վճարվում են տոկոսները, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

6. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող կողմի տարածքում այն դեպքում, երբ վճարողն այդ Կողմի ռեզիդենտ է: Այնուամենայնիվ, եթե տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող կողմի ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող կողմի տարածքում ունի մշտական հաստատություն, որի մասով առաջացել է պարտքը, որի տոկոսները վճարվում են, և այդ տոկոսների վճարման ծախսերը կրում է այդ մշտական հաստատությունը, ապա այդ տոկոսները համարվում են առաջացած այն Կողմի տարածքում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:

7. Այն դեպքում, երբ վճարողի և շահույթ ստացող սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով պարտքային պահանջի առնչությամբ վճարվող տոկոսների գումարը

գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և շահույթ ստացող սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն նշված վերջին գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի օրենքներին համապատասխան, հաշվի առնելով սույն Համաձայնագրի մյուս դրույթները:

## ՀՈԴՎԱԾ 12

## ՌՈՅԱԼԹԻՆԵՐԸ

1. Պայմանավորվող կողմի տարածքում առաջացող և մյուս Պայմանավորվող կողմի ռեզիդենտին վճարվող ռոյալթիները կարող են հարկվել այդ մյուս Կողմի տարածքում:

2. Այնուամենայնիվ, Պայմանավորվող կողմի տարածքում առաջացող ռոյալթիները կարող են նաև հարկվել այդ Կողմի տարածքում՝ այդ Կողմի օրենքներին համապատասխան. սակայն եթե ռոյալթիների շահույթ ստացող սեփականատերը մյուս Պայմանավորվող կողմի ռեզիդենտ է, այդպես գանձված հարկը չպետք է գերազանցի ռոյալթիների համախառն գումարի 5 տոկոսը:

3. «Ռոյալթիներ» եզրույթը սույն հոդվածի իմաստով նշանակում է՝ ցանկացած տեսակի վճարում, որը որպես փոխհատուցում ստացվել է գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի, այդ թվում՝ կինոնկարների, ցանկացած արտոնագրի, ապրանքային նշանի, դիզայնի կամ մոդելի, գծագրի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի ցանկացած հեղինակային իրավունքի օգտագործման կամ հեղինակային իրավունքի օգտագործման իրավունքի կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկության համար:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիների շահույթ ստացող սեփականատերը, լինելով մի Պայմանավորվող կողմի

ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող կողմի տարածքում, որտեղ առաջանում են ռոյալթիները, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և իրավունքը կամ գույքը, որի մասով վճարվում են ռոյալթիները, փաստացի կապված է այդ մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

5. Ռոյալթիները համարվում են առաջացած Պայմանավորվող կողմի տարածքում, եթե վճարողն այդ Կողմի ռեզիդենտ է: Այն դեպքում, երբ ռոյալթի վճարող անձը, անկախ Պայմանավորվող կողմի ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող կողմի տարածքում ունի մշտական հաստատություն, որի մասով առաջացել է ռոյալթի վճարելու պարտավորություն, և այդ մշտական հաստատությունը կրում է այդ ռոյալթիի ծախսերը, ապա այդ ռոյալթին համարվում է առաջացած այն Կողմի տարածքում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:

6. Այն դեպքում, երբ վճարողի և շահույթ ստացող սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով օգտագործման, իրավունքի կամ տեղեկության համար վճարվող ռոյալթիների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և շահույթ ստացող սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն նշված վերջին գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի օրենքներին համապատասխան, հաշվի առնելով սույն Համաձայնագրի մյուս դրույթները:

## ՀՈԴՎԱԾ 13

## ԳՈՒՅՔԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՎԵԼԱՃԸ

1. Պայմանավորվող կողմի ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում գտնվող՝ 6-րդ հոդվածում նշված անշարժ գույքի օտարումից ստացած

արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ մյուս Կողմի տարածքում:

2. Պայմանավորվող կողմի ձեռնարկությանը պատկանող՝ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում գտնվող մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը, այդ թվում՝ այդ մշտական հաստատության օտարումից (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ միասին) առաջացած այդպիսի արժեքի հավելաճը, կարող է հարկվել այդ մյուս Կողմի տարածքում:

3. Միջազգային փոխադրումներում նավեր և օդանավեր շահագործող Պայմանավորվող կողմի ձեռնարկության՝ այդ նավերի կամ օդանավերի կամ այդ նավերի կամ օդանավերի շահագործման հետ կապված շարժական գույքի օտարումից ստացած արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այդ Կողմի տարածքում:

4. Պայմանավորվող կողմի ռեզիդենտի կողմից բաժնեմասերի կամ համեմատելի շահաբաժինների, ինչպես, օրինակ, գործընկերություններում կամ հավատարմագրային կառավարման հանձնված ընկերություններում շահաբաժինների օտարումից ստացված արժեքի հավելաճը կարող է հարկվել մյուս Պայմանավորվող կողմի տարածքում, եթե օտարմանը նախորդած 365 օրվա ընթացքում ցանկացած ժամանակ այդ բաժնեմասերի կամ համեմատելի շահաբաժինների արժեքի ավելի քան 50 տոկոսն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացվել է այն անշարժ գույքից, որը, 6-րդ հոդվածի համաձայն, գտնվել է այդ մյուս Կողմի տարածքում: Այսուհանդերձ, սույն կետը չի կիրառվում այն բաժնեմասերի օտարումից ստացած արժեքի հավելաճի նկատմամբ, որոնք՝

ա) ցուցակված են ֆոնդային բորսայում, ինչը կարող է համաձայնեցվել Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինների միջև, կամ

բ) օտարվել կամ փոխանակվել են ընկերության վերակազմավորման, միաձուլման, բաժանման կամ նման գործողությունների շրջանակում:

5. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում նշվածից տարբեր ցանկացած այլ

գույքի օտարումից ստացած արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող կողմի տարածքում, որի ռեզիդենտ է գույքն օտարողը:

## ՀՈԴՎԱԾ 14

## ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏԸ

1. Հաշվի առնելով 15-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածների դրույթները՝ Պայմանավորվող կողմի ռեզիդենտի՝ վարձու աշխատանքի դիմաց ստացած աշխատավարձը, վարձատրությունը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Կողմի տարածքում, եթե այդ վարձու աշխատանքը չի կատարվում մյուս Պայմանավորվող կողմի տարածքում: Եթե վարձու աշխատանքը կատարվում է մյուս Պայմանավորվող կողմի տարածքում, դրա դիմաց ստացած վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Կողմի տարածքում:

2. Չհակասելով 1-ին կետի դրույթներին՝ Պայմանավորվող կողմի ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող կողմի տարածքում կատարվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միայն առաջինը նշված Կողմի տարածքում, եթե՝

ա) ստացողը դիտարկվող հարկման ժամանակահատվածում մեկնարկող կամ ավարտվող ցանկացած տասներկուամսյա ժամանակահատվածում գտնվում է մյուս Կողմի տարածքում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամկետով կամ ժամկետներով, և

բ) վարձատրությունը վճարվում է մյուս Կողմի ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

գ) վարձատրության ծախսերը չի կրում գործատուի՝ մյուս Կողմի տարածքում գտնվող մշտական հաստատությունը:

3. Չհակասելով սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ Պայմանավորվող

կողմի ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավի կամ օդանավի վրա կատարվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը հարկվում է միայն այդ Կողմի տարածքում:

## ՀՈԴՎԱԾ 15

## ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀՈՆՈՐԱՐՆԵՐԸ

Տնօրենների հոնորարները և այլ նման վճարումներ, որոնք Պայմանավորվող կողմի ռեզիդենտն ստանում է որպես մյուս Պայմանավորվող կողմի ռեզիդենտ հանդիսացող ընկերության տնօրենների խորհրդի անդամ, կարող են հարկվել այդ մյուս Կողմում:

## ՀՈԴՎԱԾ 16

## ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԻՉՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԻԿՆԵՐ

1. Չհակասելով 14-րդ հոդվածի դրույթներին՝ Պայմանավորվող կողմի ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում որպես կատարողական արվեստի գործիչ՝ թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստ կամ երաժիշտ, կամ որպես մարզիկ իրականացրած անձնական գործունեությունից ստացված եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Կողմի տարածքում:

2. Այն դեպքում, երբ կատարողական արվեստի գործչի կամ մարզիկի՝ որպես այդպիսին իրականացրած անձնական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անհատապես կատարողական արվեստի գործչին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, այդ եկամուտը, չհակասելով 14-րդ հոդվածի դրույթին, կարող է հարկվել այն Պայմանավորվող կողմի տարածքում, որտեղ իրականացվում է կատարողական արվեստի գործչի կամ մարզիկի գործունեությունը:

3. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում այն եկամտի նկատմամբ, որն ստացվում է Պայմանավորվող կողմի տարածքում կատարողական արվեստի գործչի կամ մարզիկի իրականացրած գործունեությունից այն դեպքում, երբ այդ Կողմի տարածք կատարած այցն ամբողջովին կամ հիմնականում ֆինանսավորվել է Պայմանավորվող կողմերից մեկի կամ երկուսի կամ վերջիններիս տեղական ինքնակառավարման մարմինների հանրային միջոցներից, կամ եթե այդ գործունեությունն իրականացվել է երկու Պայմանավորվող կողմերի կողմից հաստատված մշակութային կամ մարզական փոխանակման ծրագրի շրջանակներում: Այդ դեպքում եկամուտը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող կողմի տարածքում, որի ռեզիդենտ է կատարողական արվեստի գործիչը կամ մարզիկը:

## ՀՈԴՎԱԾ 17

## ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԸ ԵՎ ԱՆՈՒԻՏԵՏՆԵՐԸ

1. 18-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների համաձայն՝ Պայմանավորվող կողմի ռեզիդենտին նախկինում կատարած վարձու աշխատանքի կամ ինքնազբաղվածության համար վճարված կենսաթոշակները, անուիտետները և նման այլ վարձատրություններ (այդ թվում՝ միանվագ վճարները) ենթակա են հարկման միայն այդ Կողմի տարածքում:

2. Չհակասելով 1-ին կետի դրույթներին՝ կենսաթոշակային կամ թոշակավորման համակարգի շրջանակներում վճարվող կենսաթոշակները, անուիտետները և նման այլ վարձատրությունները (այդ թվում՝ միանվագ վճարները), որոնք համարվում են՝

ա) Պայմանավորվող կողմի սոցիալական ապահովության համակարգի մաս հանդիսացող պետական համակարգ, կամ

բ) համակարգ, որին կարող են մասնակցել ֆիզիկական անձինք՝ կենսաթոշակային նպաստներ ստանալու նպատակով, և որը հարկային

նպատակներով ճանաչվել է Պայմանավորվող կողմի տարածքում,

հարկվում են միայն այդ Կողմի տարածքում:

3. «Անուիտետ» եզրույթը նշանակում է՝ սահմանված գումար, որը պարբերաբար վճարվում է կյանքի ընթացքում կամ որոշակի կամ հաստատման ենթակա ժամանակահատվածի ընթացքում սահմանված ժամկետներում՝ պատշաճ և ամբողջական դրամական կամ դրան համարժեք փոխհատուցման դիմաց վճարումներ կատարելու պարտավորության համաձայն:

## ՀՈԴՎԱԾ 18

## ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

1. ա) Պայմանավորվող կողմի Կառավարության կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից այդ Կողմին կամ տեղական ինքնակառավարման մարմնին մատուցված ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված աշխատավարձը, աշխատանքի դիմաց վարձատրությունը և համանման այլ վարձատրությունները՝ բացի կենսաթոշակից, ենթակա են հարկման միայն այդ Կողմի տարածքում:

բ) Այնուամենայնիվ, այդպիսի աշխատավարձը, աշխատանքի դիմաց վարձատրությունը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող կողմի տարածքում, եթե ծառայությունները մատուցվում են այդ Կողմի տարածքում, և ֆիզիկական անձը այդ Կողմի ռեզիդենտ է, որը.

i) Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի դեպքում իրավունք ունի բնակվելու այնտեղ, իսկ Հայաստանի դեպքում նրա քաղաքացին է, կամ

ii) չի դարձել այդ Կողմի ռեզիդենտ՝ բացառապես ծառայություններ մատուցելու նպատակով:

2. ա) Ցանկացած կենսաթոշակ (այդ թվում՝ միանվագ վճարը), որը Պայմանավորվող կողմի Կառավարության կողմից կամ Պայմանավորվող կողմի

Կառավարության կողմից ստեղծված կամ ներդրված միջոցներից վճարվում է ֆիզիկական անձին այդ Կողմին մատուցած ծառայությունների համար, ենթակա է հարկման միայն այդ Կողմի տարածքում:

բ) Այնուամենայնիվ, եթե ծառայություններ մատուցող ֆիզիկական անձը մյուս Պայմանավորվող կողմի ռեզիդենտ է, և գործը 1-ին կետի «բ» ենթակետի շրջանակներում է, ապա համապատասխան ցանկացած կենսաթոշակ (լինի դա միանվագ, թե մասերով վճարվող) ենթակա է հարկման միայն այդ մյուս Կողմի տարածքում:

3. 14-րդ, 15-րդ, 16-րդ և 17-րդ հոդվածների դրույթները կիրառվում են Պայմանավորվող կողմի Կառավարության կամ նրա տեղական իշխանության մարմնի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծառայությունների համար աշխատավարձի, աշխատանքի դիմաց վարձատրության, կենսաթոշակների (այդ թվում՝ միանվագ վճարի) նկատմամբ:

## ՀՈԴՎԱԾ 19

## ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Այն վճարները, որոնք ստանում է ուսանողը, որը հանդիսանում է կամ անմիջապես մինչև Պայմանավորվող կողմի տարածք ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող կողմի ռեզիդենտ, և որը գտնվում է առաջինը նշված Կողմի տարածքում բացառապես իր ուսման նպատակով, վերջինիս ապրելու և ուսման համար ենթակա չէ հարկման այդ Կողմի տարածքում՝ պայմանով, որ այդ վճարումներն առաջացել են այդ Պայմանավորվող կողմի տարածքից դուրս գտնվող աղբյուրներից:

## ՀՈԴՎԱԾ 20

## ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ

1. Պայմանավորվող կողմի ռեզիդենտի եկամտի տեսակները, որոնք նշված չեն սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում, անկախ դրանց առաջացման վայրից՝ ենթակա են հարկման միայն այդ Կողմի տարածքում:

2. 1-ին կետի դրույթները չեն կիրառվում 6-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված անշարժ գույքի եկամտից տարբերվող եկամտի նկատմամբ, եթե այդպիսի եկամուտ ստացողը, լինելով Պայմանավորվող կողմի ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող կողմի տարածքում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և իրավունքը կամ գույքը, որի կապակցությամբ վճարվում է եկամուտը, փաստացի կապված է այդ մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

3. Չհակասելով 1-ին և 2-րդ կետերի դրույթներին՝ մի Պայմանավորվող կողմի ռեզիդենտի եկամտի տեսակները, որոնք նշված չեն սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում և առաջանում են մյուս Պայմանավորվող կողմի տարածքում, կարող են հարկվել նաև այդ մյուս Կողմի տարածքում:

## ՀՈԴՎԱԾ 21

## ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄԸ

1. Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի դեպքում կրկնակի հարկումը բացառվում է հետևյալ կերպով.

Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի սահմաններից դուրս այլ իրավազորության ներքո վճարվող՝ Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի հարկի հաշվեգրումը թույլատրելուն առնչվող Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի օրենքների դրույթների համաձայն (ինչը չի ազդում սույն հոդվածի ընդհանուր

սկզբունքի վրա)՝ հայաստանյան աղբյուրներից Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի ռեզիդենտ անձի կողմից ստացված եկամուտի դիմաց ուղղակիորեն կամ նվազեցումներով՝ Հայաստանի օրենքների համաձայն և սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան (բացառությամբ այն դեպքերի, երբ այդ դրույթները թույլ են տալիս Հայաստանի կողմից հարկումը բացառապես այն պատճառով, որ եկամուտը նաև Հայաստանի ռեզիդենտի կողմից ստացված եկամուտ է) վճարված Հայաստանի հարկի մասով թույլատրվում է այդ եկամտի դիմաց վճարման ենթակա՝ Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի հարկի հաշվեգրումը՝ պայմանով, որ այդ հաշվեգրումը չի գերազանցում Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի հարկի գումարը, որը հաշվարկվել է այդ եկամտի դիմաց՝ Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի հարկային օրենսդրության համապատասխան:

2. Հայաստանի դեպքում կրկնակի հարկումը բացառվում է հետևյալ կերպով.

ա) եթե Հայաստանի ռեզիդենտն ստանում է եկամուտ, որը, Համաձայնագրի դրույթների համաձայն, կարող է հարկվել Հոնկոնգի հատուկ վարչական շրջանում, ապա Հայաստանը թույլ է տալիս կատարել այդ ռեզիդենտի եկամուտներից գանձվող հարկից նվազեցում Հոնկոնգի հատուկ վարչական շրջանում վճարման ենթակա՝ եկամուտներից գանձվող հարկի գումարի չափով: Այնուամենայնիվ, նման նվազեցումը չպետք է գերազանցի եկամտահարկի այն մասը, որը հաշվարկվել է նախքան նվազեցումը տրամադրելը, և որը վերագրվում է այն եկամտին, որը կարող էր հարկվել Հոնկոնգի հատուկ վարչական շրջանում.

բ) եթե, Համաձայնագրի որևէ դրույթին համապատասխան, Հայաստանի ռեզիդենտի ստացած եկամուտն ազատվում է հարկերից Հայաստանում, ապա Հայաստանն այդ ռեզիդենտի՝ մնացած եկամտից հարկի գումարը հաշվարկելիս, այսուհանդերձ, կարող է հաշվի առնել հարկերից ազատված եկամուտը:

## ՀՈԴՎԱԾ 22

## ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒՄԸ

1. Այն անձինք, որոնք Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի դեպքում ունեն բնակության իրավունք կամ որպես իրավաբանական անձ կամ որևէ այլ կերպ գրանցված են այնտեղ, իսկ Հայաստանի դեպքում՝ Հայաստանի քաղաքացիներ են, Պայմանավորվող մյուս կողմի տարածքում ենթակա չեն հարկման կամ դրա հետ կապված պահանջի, որն այլ կամ ավելի ծանր բեռ է, քան այն հարկումը և դրա հետ կապված պահանջները, որոնք նույն հանգամանքներում, մասնավորապես՝ ռեզիդենտության մասով, ներկայացվում են կամ կարող են ներկայացվել այդ մյուս Կողմի տարածքում բնակության իրավունք ունեցող կամ որպես իրավաբանական անձ կամ որևէ այլ կերպ գրանցված անձանց (եթե այդ մյուս Կողմը Հոնկոնգի հատուկ վարչական շրջանն է) կամ այդ մյուս Կողմի քաղաքացիներին (եթե այդ մյուս Կողմը Հայաստանն է): Սույն դրույթը, չհակասելով 1-ին հոդվածի դրույթներին, կիրառվում է նաև այն անձանց նկատմամբ, որոնք Պայմանավորվող կողմերից մեկի կամ երկուսի ռեզիդենտ չեն:

2. Քաղաքացիություն չունեցող անձինք, որոնք Պայմանավորվող կողմի ռեզիդենտներ են, որևէ Պայմանավորվող կողմի տարածքում ենթակա չեն հարկման կամ դրա հետ կապված պահանջի, որն այլ կամ ավելի ծանր բեռ է, քան այն հարկումը և դրա հետ կապված պահանջները, որոնք նույն հանգամանքներում, մասնավորապես՝ ռեզիդենտության մասով, ներկայացվում են կամ կարող են ներկայացվել Կողմի տարածքում բնակության իրավունք ունեցող անձանց (եթե այդ Կողմը Հոնկոնգի հատուկ վարչական շրջանն է) կամ Կողմի քաղաքացիներին (եթե այդ Կողմը Հայաստանն է):

3. Պայմանավորվող կողմի ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում ունեցած մշտական հաստատության հարկման շրջանակը այդ մյուս Կողմի տարածքում չպետք է լինի պակաս բարենպաստ, քան այդ մյուս Կողմի տարածքում նույն գործունեությունն իրականացնող ձեռնարկությունների հարկման շրջանակը: Սույն դրույթը չպետք է մեկնաբանվի որպես

Պայմանավորվող կողմի համար պարտավորություն՝ մյուս Պայմանավորվող կողմի ռեզիդենտներին քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման վրա հարկման նպատակներով տրամադրելու այնպիսի անձնական արտոնություններ, նվազեցումներ և զեղչեր, ինչպիսիք Պայմանավորվող կողմը շնորհում է իր սեփական ռեզիդենտներին:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի 1-ին, 11-րդ հոդվածի 7-րդ կամ 12-րդ հոդվածի 6-րդ կետերի դրույթները՝ Պայմանավորվող կողմի ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող կողմի ռեզիդենտին վճարվող տոկոսները, ռոյալթիները և մյուս վճարումները այդ ձեռնարկության հարկվող շահույթը որոշելու նպատակով նվազեցվում են նույն պայմաններով, որոնց համաձայն դրանք կվճարվեին առաջինը նշված Կողմի ռեզիդենտին:

5. Պայմանավորվող կողմի այն ձեռնարկությունները, որոնց կապիտալն ամբողջությամբ կամ մասամբ պատկանում է կամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկվում մյուս Պայմանավորվող կողմի մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, առաջինը նշված Կողմի տարածքում ենթակա չեն հարկման կամ դրա հետ կապված պահանջի, որն այլ կամ ավելի ծանր բեռ է, քան այն հարկումը և դրա հետ կապված պահանջները, որոնք ներկայացվում են կամ կարող են ներկայացվել առաջինը նշված Կողմի տարածքում գործող համանման ձեռնարկություններին:

6. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն այն հարկերի նկատմամբ, որոնք սահմանված են սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածում:

## ՀՈԴՎԱԾ 23

## ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Եթե անձը գտնում է, որ Պայմանավորվող կողմերից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցրել են կամ կհանգեցնեն իր համար սույն Համաձայնագրի

դրույթներին չհամապատասխանող հարկման, նա կարող է, անկախ այդ Կողմերի ներքին օրենսդրությամբ նախատեսված իրավական պաշտպանության միջոցներից, իր գործը ներկայացնել Պայմանավորվող կողմի իրավասու մարմնին, որի ռեզիդենտ է ինքը, կամ եթե նրա գործն ընկնում է 22-րդ հոդվածի 1-ին կետի գործողության ներքո, այն Պայմանավորվող կողմի իրավասու մարմնին, որտեղ նա ունի բնակության իրավունք կամ որպես իրավաբանական անձ կամ որևէ այլ կերպ գրանցված է (Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի դեպքում), կամ որի քաղաքացի է ինքը (Հայաստանի դեպքում): Գործը պետք է ներկայացվի Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցումից հետո՝ երեք տարվա ընթացքում:

2. Եթե իրավասու մարմինը բողոքը համարում է հիմնավորված, և եթե նա չի կարող հանգել գոհացուցիչ լուծման, վերջինս ձգտում է գործը լուծել մյուս Պայմանավորվող կողմի իրավասու մարմնի հետ փոխհամաձայնությամբ՝ սույն Համաձայնագրին չհամապատասխանող հարկումը բացառելու նպատակով: Ձեռք բերված ցանկացած համաձայնություն պետք է կատարվի՝ անկախ Պայմանավորվող կողմի ներպետական օրենքներում առկա ժամանակային սահմանափակումից:

3. Պայմանավորվող կողմի իրավասու մարմինները Համաձայնագրի մեկնաբանության կամ կիրառման ընթացքում առաջացող ցանկացած դժվարություն կամ կասկած ձգտում են կարգավորել փոխհամաձայնությամբ: Նրանք կարող են քննարկել նաև Համաձայնագրով չնախատեսված դեպքերում կրկնակի հարկումը բացառելու հարցը:

4. Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները կարող են անմիջականորեն հաղորդակցվել միմյանց հետ, այդ թվում՝ իրենցից կամ իրենց ներկայացուցիչներից կազմված համատեղ հանձնաժողովի միջոցով՝ նախորդ կետերի առնչությամբ համաձայնության հասնելու նպատակով:

## ՀՈԴՎԱԾ 24

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ

1. Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները փոխանակում են այնպիսի տեղեկություններ, որոնք ենթադրաբար առնչվում են Պայմանավորվող կողմերի՝ հարկերի առնչությամբ սույն Համաձայնագրի դրույթների իրականացմանը կամ ներպետական օրենքների կիրառմանը կամ կատարմանն այնքանով, որքանով դրանց շրջանակում կատարվող հարկումը չի հակասում Համաձայնագրին: Տեղեկությունների փոխանակումը չի սահմանափակվում 1-ին հոդվածով:

2. Պայմանավորվող կողմի՝ 1-ին կետի համաձայն ստացած ցանկացած տեղեկություն համարվում է գաղտնի, ինչպես այդ Կողմի ներպետական օրենսդրության համապատասխան ստացված տեղեկությունը, և տրամադրվում է միայն այն անձանց կամ մարմիններին (այդ թվում՝ դատարաններին և վարչական մարմիններին), որոնք առնչվում են 1-ին կետում նշված հարկերի գնահատմանը կամ գանձմանը, դրանց մասով հարկադիր կատարմանը կամ դատական հետապնդմանը, բողոքների քննմանը կամ վերոնշյալի վերահսկմանը: Այդ անձինք կամ մարմինները տեղեկությունն օգտագործում են միայն այդ նպատակներով: Նրանք կարող են հրապարակել տեղեկությունը բաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումների ժամանակ: Ստացված տեղեկությունը որևէ նպատակով չի տրամադրվում երրորդ մարմիններին:

3. 1-ին և 2-րդ կետերի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել այնպես, որ Պայմանավորվող կողմերին պարտավորեցնեն՝

ա) իրականացնել իր կամ մյուս Պայմանավորվող կողմի օրենքներին և վարչական փորձին հակասող վարչական միջոցառումներ.

բ) տրամադրել տեղեկություններ, որոնք հասանելի չեն իր կամ մյուս Պայմանավորվող կողմի օրենքներով կամ վարչարարության բնականոն գործընթացում.

գ) տրամադրել տեղեկություններ, որոնք բացահայտում են որևէ առևտրային, ձեռնարկատիրական, արդյունաբերական, կոմերցիոն կամ մասնագիտական գաղտնիք կամ առևտրային գործընթաց, կամ՝ տեղեկություններ, որոնց տրամադրումը հակասում է պետական քաղաքականությանը (հասարակական կարգին):

4. Եթե Պայմանավորվող կողմը պահանջում է տեղեկություններ սույն հոդվածի համաձայն, մյուս Պայմանավորվող կողմը պետք է օգտագործի տեղեկություններ ձեռք բերելու իր միջոցները՝ պահանջված տեղեկությունները ձեռք բերելու համար նույնիսկ այն դեպքում, երբ այդ մյուս Կողմն իր հարկային նպատակների համար չունի այդպիսի տեղեկությունների անհրաժեշտություն: Նախորդ նախադասության մեջ նշված պարտավորությունը ենթակա է 3-րդ կետով նախատեսված սահմանափակումներին, սակայն այդպիսի սահմանափակումները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող կողմին թույլտվություն՝ հրաժարվելու տեղեկությունները տրամադրելուց միայն այն պատճառով, որ այդ տեղեկություններն իր համար հետաքրքրություն չեն ներկայացնում հարկային տեսանկյունից:

5. 3-րդ կետի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող կողմին թույլտվություն՝ հրաժարվելու տեղեկությունները տրամադրելուց միայն այն պատճառով, որ տեղեկություններին տիրապետում են բանկը, այլ ֆինանսական հաստատություն, նշանակված անձը կամ գործակալությունում աշխատող անձը կամ ֆիդուցիարը, կամ որ դրանք առնչվում են անձի շահերին սեփականության տեսանկյունից:

## ՀՈԴՎԱԾ 25

## ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Սույն Համաձայնագրի ոչ մի դրույթ չպետք է ազդի Կառավարության առաքելությունների, այդ թվում՝ հյուպատոսական հիմնարկների՝ միջազգային

իրավունքի ընդհանուր կանոնների կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված հարկային արտոնությունների վրա:

## ՀՈԴՎԱԾ 26

## ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1. Չհակասելով սույն Համաձայնագրի մյուս դրույթներին՝ սույն Համաձայնագրով նախատեսված արտոնությունը չի շնորհվում եկամտի որևէ տեսակի նկատմամբ, եթե հաշվի առնելով բոլոր համապատասխան փաստերն ու հանգամանքները՝ ողջամիտ է եզրակացնել, որ այդ արտոնությունն ստանալը եղել է այդ արտոնությանն ուղղակիորեն կամ անուղղակիորեն հանգեցրած ցանկացած պայմանավորվածության կամ գործարքի գլխավոր նպատակներից մեկը, եթե չի հաստատվել, որ այդպիսի հանգամանքներում այդ արտոնությունը շնորհելը կհամապատասխանի սույն Համաձայնագրի համապատասխան դրույթների առարկային և նպատակներին:

2. Սույն Համաձայնագրում ոչինչ չի սահմանափակում յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի՝ հարկերից խուսափելու և դրանք շրջանցելու վերաբերյալ ներպետական օրենսդրությունը և միջոցները կիրառելու իրավունքը:

## ՀՈԴՎԱԾ 27

## ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցում է մյուսին սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար իր ներպետական օրենսդրության համաձայն անհրաժեշտ ընթացակարգերի կատարման մասին:

2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 1-ին կետում նշված ծանուցագրերից վերջինի ստացման ամսաթվից, և դրա դրույթները գործում են՝

ա) Հոնկոնգի հատուկ վարչական շրջանում՝

Հոնկոնգի հատուկ վարչական շրջանում գանձվող հարկերի մասով՝ ցանկացած հարկային տարում, որն սկսում է Համաձայնագրի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա ապրիլի առաջին օրը կամ դրանից հետո.

բ) Հայաստանում՝

i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի մասով՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի առաջին օրը կամ դրանից հետո ստացված եկամուտների համար, և

ii) եկամտի նկատմամբ հաշվարկվող այլ հարկերի մասով՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի առաջին օրը կամ դրանից հետո սկսվող հարկային տարում գանձվող հարկերի նկատմամբ:

## ՀՈԴՎԱԾ 28

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մնում մինչև Պայմանավորվող կողմերի կողմից դրա գործողության դադարեցումը: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հնգամյա ժամկետը լրանալուց հետո ցանկացած օրացուցային տարվա ավարտից առնվազն վեց ամիս առաջ դադարեցման մասին պաշտոնական ուղիներով գրավոր ծանուցելով մյուս Պայմանավորվող կողմին: Այդ դեպքում սույն Համաձայնագրի գործողությունը դադարում է՝

ա) Հոնկոնգի հատուկ վարչական շրջանում՝

Հոնկոնգի հատուկ վարչական շրջանում գանձվող հարկերի մասով՝

դադարեցման մասին ծանուցումն ուղարկելու տարվան հաջորդող օրացուցային տարվա ապրիլի առաջին օրը կամ դրանից հետո սկսվող ցանկացած դիտարկվող տարվա համար.

բ) Հայաստանում՝

i) աղբյուրից գանձվող հարկերի մասով՝ դադարեցման մասին ծանուցումն ուղարկելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի առաջին օրը կամ դրանից հետո ստացված եկամուտների համար, և

ii) եկամտի նկատմամբ հաշվարկվող այլ հարկերի մասով՝ դադարեցման մասին ծանուցումն ուղարկելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի առաջին օրը կամ դրանից հետո սկսվող հարկային տարում գանձվող հարկերի նկատմամբ:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Երևանում, 2024 թվականի հունիսի 24-ին, երկու բնօրինակով՝ հայերեն, չինարեն և անգլերեն. բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման հետ կապված տարաձայնություններ առաջանալու դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

**Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից՝**

**Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի Կառավարության կողմից՝**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՆԿՈՆԳԻ ՀԱՏՈՒԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՆ ՈՒ ՇՐՋԱՆՑԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի Կառավարության միջև Եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելն ու շրջանցելը կանխելու մասին Համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրելիս երկու կառավարությունները համաձայնեցին հետևյալ դրույթների վերաբերյալ, որոնք կազմում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

1. ՎԿԱՅԱԿՈՉԵԼՈՎ սույն Համաձայնագրի 23-րդ ՀՈԴՎԱԾԻ (ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ) 1-ին կետը

Հասկանալի է, որ Պայմանավորվող կողմի իրավասու մարմինը, որին անձը ներկայացրել է փոխհամաձայնեցման ընթացակարգի վերաբերյալ գործը, մյուս Պայմանավորվող կողմի իրավասու մարմնի հետ իրականացնելու է երկկողմանի ծանուցումների կամ խորհրդակցությունների գործընթաց, եթե առաջինը նշված իրավասու մարմինը հիմնավորված չի համարում այդ անձի առարկությունը:

2. ՎԿԱՅԱԿՈՉԵԼՈՎ սույն Համաձայնագրի 25-րդ ՀՈԴՎԱԾԸ (ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ)

Հասկանում ենք, որ Հայաստանի դեպքում «Կառավարության առաքելություններ» եզրույթը նշանակում է դիվանագիտական առաքելություններ:

Ի հաստատումն որի՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Երևանում, 2024 թվականի հունիսի 24-ին, երկու բնօրինակով՝ հայերեն, չինարեն և անգլերեն. բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման հետ կապված տարաձայնություններ առաջանալու դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

**Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից՝**

**Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի Կառավարության կողմից՝**

# AGREEMENT
# BETWEEN THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA AND THE GOVERNMENT OF THE HONG KONG SPECIAL ADMINISTRATIVE REGION OF THE PEOPLE'S REPUBLIC OF CHINA
# FOR THE ELIMINATION OF DOUBLE TAXATION WITH RESPECT TO TAXES ON INCOME AND THE PREVENTION OF TAX EVASION AND AVOIDANCE

The Government of the Republic of Armenia and the Government of the Hong Kong Special Administrative Region of the People's Republic of China,

Desiring to further develop their economic relationship and to enhance their co-operation in tax matters,

Intending to conclude an Agreement for the elimination of double taxation with respect to taxes on income without creating opportunities for non-taxation or reduced taxation through tax evasion or avoidance (including through treaty-shopping arrangements aimed at obtaining reliefs provided in this Agreement for the indirect benefit of residents of third jurisdictions),

Have agreed as follows:

## ARTICLE 1
## PERSONS COVERED

1. This Agreement shall apply to persons who are residents of one or both of the Contracting Parties.

2. For the purposes of the Agreement, income derived by or through an entity or arrangement that is treated as wholly or partly fiscally transparent under the tax law of either Contracting Party shall be considered to be income of a resident of a Contracting Party but only to the extent that the income is treated, for purposes of taxation by that Party, as the income of a resident of that Party.

3. The Agreement shall not affect the taxation, by a Contracting Party, of its residents except with respect to the benefits granted under paragraph 2 of Article 9, paragraph 2 of Article 17 and Articles 18, 19, 21, 22, 23 and 25.

## ARTICLE 2
## TAXES COVERED

1. This Agreement shall apply to taxes on income imposed on behalf of a Contracting Party, irrespective of the manner in which they are levied.

2. There shall be regarded as taxes on income all taxes imposed on total income, or on elements of income, including taxes on gains from the alienation of movable or immovable property, taxes on the total amounts of wages or salaries paid by enterprises, as well as taxes on capital appreciation.

3. The existing taxes to which the Agreement shall apply are in particular:

   a) in the case of the Hong Kong Special Administrative Region,

      (i) profits tax;

      (ii) salaries tax; and

      (iii) property tax;

      whether or not charged under personal assessment

      (hereinafter referred to as "Hong Kong Special Administrative Region tax");

   b) in the case of Armenia,

      (i) the profit tax; and

      (ii) the income tax

(hereinafter referred to as "Armenian tax").

4. The Agreement shall apply also to any identical or substantially similar taxes that are imposed after the date of signature of the Agreement in addition to, or in place of, the existing taxes. The competent authorities of the Contracting Parties shall notify each other of any significant changes that have been made in their taxation laws.

## ARTICLE 3
## GENERAL DEFINITIONS

1. For the purposes of this Agreement, unless the context otherwise requires:

a) (i) the term "Hong Kong Special Administrative Region" means any place where the tax laws of the Hong Kong Special Administrative Region of the People's Republic of China apply;

(ii) the term "Armenia" means the Republic of Armenia;

b) the term "business" includes the performance of professional services and of other activities of an independent character;

c) the term "company" means any body corporate or any entity that is treated as a body corporate for tax purposes;

d) the term "competent authority" means:

(i) in the case of the Hong Kong Special Administrative Region, the Commissioner of Inland Revenue or his authorised representative;

(ii) in the case of Armenia, the Ministry of Finance and the State Revenue Committee or their authorised representatives;

e) the term "Contracting Party" or "Party" means the Hong Kong Special Administrative Region or Armenia, as the context requires;

f) the term "enterprise" applies to the carrying on of any business;

g) the terms "enterprise of a Contracting Party" and "enterprise of the other Contracting Party" mean respectively an enterprise carried on by a resident of a Contracting Party and an enterprise carried on by a resident of the other Contracting Party;

h) the term "international traffic" means any transport by a ship or aircraft except when the ship or aircraft is operated solely between places in a Contracting Party and the enterprise that operates the ship or aircraft is not an enterprise of that Party;

i) the term "national", in relation to Armenia, means:

(i) any individual possessing the nationality or citizenship of Armenia;

(ii) any legal person, partnership or association deriving its status as such from the laws in force in Armenia;

j) the term "person" includes an individual, a company, a trust, a partnership and any other body of persons;

k) the term "recognised pension fund" of a Contracting Party means an entity or arrangement established in that Party that is treated as a separate person under the taxation laws of that Party and:

(i) that is established and operated exclusively or almost exclusively to administer or provide retirement benefits and ancillary or incidental benefits to individuals and that is regulated as such by that Party; or

(ii) that is established and operated exclusively or almost exclusively to invest funds for the benefit of entities or arrangements referred to in subdivision (i).

2. As regards the application of the Agreement at any time by a Contracting Party, any term not defined therein shall, unless the context otherwise requires or the competent authorities agree to a different meaning pursuant to the provisions of Article 23, have the meaning that it has at that time under the law of that Party for the purposes of the taxes to which the Agreement applies, any meaning under the applicable tax laws of that Party prevailing over a meaning given to the term under other laws of that Party.

## ARTICLE 4
## RESIDENT

1. For the purposes of this Agreement, the term "resident of a Contracting Party" means:

   a) in the case of the Hong Kong Special Administrative Region,

      (i) any individual who ordinarily resides in the Hong Kong Special Administrative Region;

      (ii) any individual who stays in the Hong Kong Special Administrative Region for more than 180 days during a year of assessment or for more than 300 days in two consecutive years of assessment one of which is the relevant year of assessment;

      (iii) a company incorporated in the Hong Kong Special Administrative Region or, if incorporated outside the Hong Kong Special Administrative Region, being normally managed or controlled in the Hong Kong Special Administrative Region;

      (iv) any other person constituted under the laws of the Hong Kong Special Administrative Region or, if constituted outside the Hong Kong Special Administrative Region, being normally managed or controlled in the Hong Kong Special Administrative Region;

b) in the case of Armenia, any person who, under the laws of Armenia, is liable to tax therein by reason of his domicile, residence, place of incorporation, place of management or any other criterion of a similar nature. This term, however, does not include any person who is liable to tax in Armenia in respect only of income from sources in Armenia;

c) in the case of either Contracting Party, the Government of that Party and any local authority thereof as well as a recognised pension fund of that Party.

2. Where by reason of the provisions of paragraph 1 an individual is a resident of both Contracting Parties, then his status shall be determined as follows:

a) he shall be deemed to be a resident only of the Party in which he has a permanent home available to him; if he has a permanent home available to him in both Parties, he shall be deemed to be a resident only of the Party with which his personal and economic relations are closer (centre of vital interests);

b) if the Party in which he has his centre of vital interests cannot be determined, or if he has not a permanent home available to him in either Party, he shall be deemed to be a resident only of the Party in which he has an habitual abode;

c) if he has an habitual abode in both Parties or in neither of them, he shall be deemed to be a resident only of the Party in which he has the right of abode (in the case of the Hong Kong Special Administrative Region) or of which he is a national (in the case of Armenia);

d) if he has the right of abode in the Hong Kong Special Administrative Region and is also a national of Armenia, or if he does not have the right of abode in the Hong Kong Special Administrative Region nor is he a national of Armenia, the competent authorities of the Contracting Parties shall settle the question by mutual agreement.

3. Where by reason of the provisions of paragraph 1 a person other than an individual is a resident of both Contracting Parties, the competent authorities of the Contracting Parties shall endeavour to determine by mutual agreement the Contracting Party of which such person shall be deemed to be a resident for the purposes of the Agreement, having regard to its place of effective management, the place where it is incorporated or otherwise constituted and any other relevant factors. In the absence of such agreement, such person shall not be entitled to any relief or exemption from tax provided by the Agreement except to the extent and in such manner as may be agreed upon by the competent authorities of the Contracting Parties.

## ARTICLE 5
## PERMANENT ESTABLISHMENT

1. For the purposes of this Agreement, the term "permanent establishment" means a fixed place of business through which the business of an enterprise is wholly or partly carried on.

2. The term "permanent establishment" includes especially:

   a) a place of management;

   b) a branch;

   c) an office;

   d) a factory;

   e) a workshop; and

   f) a mine, an oil or gas well, a quarry or any other place of exploration or extraction of natural resources.

3. The term "permanent establishment" also encompasses:

a) a building site, a construction, assembly or installation project or supervisory activities in connection therewith, but only if such site, project or activities last more than nine months;

b) the furnishing of services, including consultancy services, by an enterprise directly or through employees or other personnel engaged by the enterprise for such purpose, but only if activities of that nature continue in a Contracting Party for a period or periods aggregating more than 183 days in any twelve-month period commencing or ending in the taxable period concerned.

4. For the sole purpose of determining:

a) whether the nine-month period referred to in subparagraph a) of paragraph 3 has been exceeded:

(i) where an enterprise of a Contracting Party carries on activities in the other Contracting Party at a place that constitutes a building site or a construction, assembly or installation project, or carries on supervisory activities in connection with such a place, and these activities are carried on during one or more periods of time that, in the aggregate, exceed 30 days without exceeding nine months; and

(ii) connected activities are carried on at (or, in the case of supervisory activities, in connection with) the same building site or construction, assembly or installation project during different periods of time, each exceeding 30 days, by one or more enterprises closely related to the first-mentioned enterprise,

these different periods of time shall be added to the period of time during which the first-mentioned enterprise has carried on activities at that building site or construction, assembly or installation project.

enterprise carries on business activities at the same place or at another place in the same Contracting Party and:

a) that place or other place constitutes a permanent establishment for the enterprise or the closely related enterprise under the provisions of this Article; or

b) the overall activity resulting from the combination of the activities carried on by the two enterprises at the same place, or by the same enterprise or closely related enterprises at the two places, is not of a preparatory or auxiliary character,

provided that the business activities carried on by the two enterprises at the same place, or by the same enterprise or closely related enterprises at the two places, constitute complementary functions that are part of a cohesive business operation.

7. Notwithstanding the provisions of paragraphs 1 and 2 but subject to the provisions of paragraph 8, where a person is acting in a Contracting Party on behalf of an enterprise and, in doing so, habitually concludes contracts, or habitually plays the principal role leading to the conclusion of contracts that are routinely concluded without material modification by the enterprise, and these contracts are:

a) in the name of the enterprise; or

b) for the transfer of the ownership of, or for the granting of the right to use, property owned by that enterprise or that the enterprise has the right to use; or

c) for the provision of services by that enterprise,

that enterprise shall be deemed to have a permanent establishment in that Party in respect of any activities which that person undertakes for the enterprise, unless the activities of such person are limited to those mentioned in paragraph 5 which, if exercised through a fixed place of business (other than a fixed place of business to which paragraph 6 would

apply), would not make this fixed place of business a permanent establishment under the provisions of that paragraph.

8. Paragraph 7 shall not apply where the person acting in a Contracting Party on behalf of an enterprise of the other Contracting Party carries on business in the first-mentioned Party as an independent agent and acts for the enterprise in the ordinary course of that business. Where, however, a person acts exclusively or almost exclusively on behalf of one or more enterprises to which it is closely related, that person shall not be considered to be an independent agent within the meaning of this paragraph with respect to any such enterprise.

9. The fact that a company which is a resident of a Contracting Party controls or is controlled by a company which is a resident of the other Contracting Party, or which carries on business in that other Party (whether through a permanent establishment or otherwise), shall not of itself constitute either company a permanent establishment of the other.

10. For the purposes of this Article, a person or enterprise is closely related to an enterprise if, based on all the relevant facts and circumstances, one has control of the other or both are under the control of the same persons or enterprises. In any case, a person or enterprise shall be considered to be closely related to an enterprise if one possesses directly or indirectly more than 50 per cent of the beneficial interest in the other (or, in the case of a company, more than 50 per cent of the aggregate vote and value of the company's shares or of the beneficial equity interest in the company) or if another person or enterprise possesses directly or indirectly more than 50 per cent of the beneficial interest (or, in the case of a company, more than 50 per cent of the aggregate vote and value of the company's shares or of the beneficial equity interest in the company) in the person and the enterprise or in the two enterprises.

## ARTICLE 6

## INCOME FROM IMMOVABLE PROPERTY

1. Income derived by a resident of a Contracting Party from immovable property (including income from agriculture or forestry) situated in the other Contracting Party may be taxed in that other Party.

2. The term "immovable property" shall have the meaning which it has under the law of the Contracting Party in which the property in question is situated. The term shall in any case include property accessory to immovable property, livestock and equipment used in agriculture and forestry, rights to which the provisions of general law respecting landed property apply, usufruct of immovable property and rights to variable or fixed payments as consideration for the working of, or the right to work, mineral deposits, quarries, sources and other natural resources; ships and aircraft shall not be regarded as immovable property.

3. The provisions of paragraph 1 shall apply to income derived from the direct use, letting, or use in any other form of immovable property.

4. The provisions of paragraphs 1 and 3 shall also apply to the income from immovable property of an enterprise.

## ARTICLE 7

## BUSINESS PROFITS

1. The profits of an enterprise of a Contracting Party shall be taxable only in that Party unless the enterprise carries on business in the other Contracting Party through a permanent establishment situated therein. If the enterprise carries on business as aforesaid, the profits of the enterprise may be taxed in the other Party but only so much of them as is attributable to that permanent establishment.

2. Subject to the provisions of paragraph 3, where an enterprise of a Contracting Party carries on business in the other Contracting Party through a permanent establishment situated therein, there shall in each Contracting Party be attributed to that permanent establishment the profits

which it might be expected to make if it were a distinct and separate enterprise engaged in the same or similar activities under the same or similar conditions and dealing wholly independently with the enterprise of which it is a permanent establishment.

3. In determining the profits of a permanent establishment, there shall be allowed as deductions expenses which are incurred for the purposes of the permanent establishment, including executive and general administrative expenses so incurred, whether in the Contracting Party in which the permanent establishment is situated or elsewhere.

4. Insofar as it has been customary in a Contracting Party to determine the profits to be attributed to a permanent establishment on the basis of an apportionment of the total profits of the enterprise to its various parts, nothing in paragraph 2 shall preclude that Contracting Party from determining the profits to be taxed by such an apportionment as may be customary; the method of apportionment adopted shall, however, be such that the result shall be in accordance with the principles contained in this Article.

5. No profits shall be attributed to a permanent establishment by reason of the mere purchase by that permanent establishment of goods or merchandise for the enterprise.

6. For the purposes of the preceding paragraphs, the profits to be attributed to the permanent establishment shall be determined by the same method year by year unless there is good and sufficient reason to the contrary.

7. Where profits include items of income which are dealt with separately in other Articles of this Agreement, then the provisions of those Articles shall not be affected by the provisions of this Article.

## ARTICLE 8

## INTERNATIONAL SHIPPING AND AIR TRANSPORT

1. Profits of an enterprise of a Contracting Party from the operation of ships or aircraft in international traffic shall be taxable only in that Party.

2. The provisions of paragraph 1 shall also apply to profits from the participation in a pool, a joint business or an international operating agency.

## ARTICLE 9

## ASSOCIATED ENTERPRISES

1. Where

   a) an enterprise of a Contracting Party participates directly or indirectly in the management, control or capital of an enterprise of the other Contracting Party; or

   b) the same persons participate directly or indirectly in the management, control or capital of an enterprise of a Contracting Party and an enterprise of the other Contracting Party,

   and in either case conditions are made or imposed between the two enterprises in their commercial or financial relations which differ from those which would be made between independent enterprises, then any profits which would, but for those conditions, have accrued to one of the enterprises, but, by reason of those conditions, have not so accrued, may be included in the profits of that enterprise and taxed accordingly.

